

խօսքերի մի շարք իրանց անձնապէս կօնի համար կարելի է ասել թէ ծանօթ Նիլիամ Շեքսպիրի մասին և գարեն ջրագործութիւնով է պարապել, զայիս է այս և զրագացութեան, թէ Շեքսպիր դերասանը նուն դրամակական բանաստեղծն է, Դօննելլի'ի խօսքին, թէ Շեքսպիրը եղած է գարեն ջրագործ, որովհետեւ նա մասս է ծախել, Շիվալպերը պատասխանում է. «Մի պատւական գրքի մէջ Ս. Ստոպէս (C. Stopes) Լոնդոնում ապացուցեց, որ շատ աւելի շուտով Բա-

գոնի համար կարելի է ասել թէ գարեն ջրագործութիւնով է պարապել, քան Շեքսպիրի համար, որովհետեւ Բակօնը իւր գրւածների մի քանի տեղերում ընդարձակօրէն և գործը հասկացողի նման խօսում է գարենուր շինելու մասին, մինչդեռ Շեքսպիրը մատնում է իւր ծանօթութիւնը գարեն ջրի հետ միմիան նրանով, որ խօսում է գարեն ջրի և նորա ազգեցուցեան մասին»:

Ա. Ա.

ՍԻՄԷՅՆ ՀԱԽՈՒՄԵԱՆ. — «ՄԱՆԻԿ», (Ժամանակակից վէպ): Նուշի, տպարան Հայոց Հոգևոր Տեսչութեան, 1889 թ., մեծ քառածալ, 76 երես, տառ № 12: Գինն է՝ 40 կոպէկ:

Նրեակափեցէք Ձեղ, ընթերցո՞ղ, պատերազմի ժամանակ՝ արհեստական կերպով նոր կազմակերպւած մի քաղաքում, ուր խմբած են բացի զինուրական և սովորական անձերից ակնալիներ, որոնց նպատակն է գնալ իւղու պատառներ, գիշատել, միանգամից հարստանալ. Պ. Հախումեանի գիրքը սկսում է այլ տեսակի գիշատիչների, չաղացած սարդերի մի զգելի խնճուքի նկարագրութիւնով. Դոքա անամօթ են, աներես. դոքա անպատկառ կերպով և անվախ ոռնակոխ են անում ամեն սրբութիւն. դոքա հաւատացած են, որ փողն է միակ չարգելի ոչքը աշխարհում, որ նա է մարդու գնահատելու չափը, որ նորանով կարելի է գնել ամեն բան, Նրկրորդ գլուխը նկարագրում է միենուն քաղաքում մի չարգելի բժշկի առն, ուր ժողովւած են զանազան տեղական աղաներ՝ հաշլու տալու գաղթականների համար հաւաքած մթերքների գործադրութեան մասին. Ազտեղ լուսաբանում է մեր հասարակական գործերի մէջ լաճախ տեղի ունեցող այն երեսութը, որ հասարակական գումարները ուտում, անհետանում են, թագցում են կամ ծախսում են ըստ գործավարների ճաշկի:

Նրբորդ գլուխը՝ Թիֆլիսի փողոցավին անհոգ կեանքի, մեր անպահով հաւ ուսուցչի և մտաւոր աշխատանք ներկացնող դասակարգի դրութեան նկարագրութիւնն է.

Զորբորդ և հինգերորդ գլուխները նկարագրում են Թիֆլիսի կիսաերազացած հարուստ Տօկոսովի կեանքի մի քանի գծերը. Տօկոսովը, աչքի, առաջ ունենալով մօտալուս ընորութիւնները, սարքում է ճաշ,

որով նա աննկատելի կերպով աղդում է ընտրողների տրամադրութեան վերաբ ծօկոսովը հաշելով, որ հարուստ բարեկամների հետ կապունենալը նորան շատ շահաւետ կարող է լինել—ծուռն է նայում իւրքով նունեի սիրու վերաբ դէպի մի Սարգսեան անունով հասարակ երիտասարդ: Ծօկոսովը, հաւանելով մի աղքատ գաղթականի Մանիկ աղջրկակ երեսը, համաձանում է բարերար դառնալ ալդ աղջկակ համար, նորան ընդունում է իրանց տունը և ձգտում է հասնել իւր ցած նպատակին:

Պատկերները հետաքրքրական են, նկարւած են խոշոր գծերով, որոց գոյներով, թանձր ստւերներով: Նոքա իրանց իրական միակողմանի հարազատութիւնով համնում են մինչև անգամ կոպութեան: Դիտած, լուսաբանած երևովները—մեր կեանքի, մեր զարգացումի բացասական կողմի արդիւնքն են:

Պ. Հախումնանը իւր գրւածքը անուանելէ ժամանակակից վէպ և տւել է նորան «Մանիկ» վերնագիրը, Նիւթը, վրաւի, ժամանակակից է: Բայց ամբողջ գրւածքը ամեննեին վէպ չէ, այլ վերև վիշած պատկերների մի ժողովածու: Ագդ պատկերները ոչ միմեանց հետ, ոչ էլ վէպի հերոսուհի Մանիկի հետ՝ սերտ կապ չ'ունին, բացի այն կապից, որ նոքա ունին միմեանց հետ իրբն մեր կեանքի արդասիքներ և լուսաբանութիւններ:

Առանձին պատկերները կարելի կը լինէր միմեանց հետ կապել, եթէ հեղինակը նեղութիւն կրէր իւր Մանիկին, իրբն փորձաքար մտցնե-

լու ամեն տեղ և նորա միջոցով. կըշուէր զանազան դասակարգերի զարարերութիւնները դէպի հասարակական գործը. գուցէ այն ժամանակ գրւածքը ընդարձակւէր, մեծանար, —բաց նա լիսկատար վէպի ձև կը ստանար և աղժմեան «Մանիկի»: Նիւթը կը հաւեցնէր իւր մէջ և կիւրացնէր...

«Մանիկ» վէպը աղդպիսով, կարծես, գեռ չէ գրւած—այլ գրւելու է և մեր առաջ գրւած է նորա համար հարկաւոր նիւթերը, Վերև վիշած պատկերի մէջ հերոսուհի Մանիկը երեսում է մի երկու տեղում, և ահա նորա գերը ամբողջ գրւածքի մէջ:

Ալաշկերացի գաղթական Հարօն կորցնում է իւր որդոն և, լսելով, որ նա Թիֆլիսումն է, ճանապարհ է ընկնում ալդ քաղաքը նորան որոնելու: Առնում է հետը կնջը և իւր աղջիկ Մանիկին: Դոքա Թիֆլիս են դախուադա աղքատ և անփող: Դոցա առաջին ծանօթները լինում են ուսուցիչները, որոնք, պաշտօն չ'ունենալով, գժւարանում են հոգալ զոցա ապրուսը: Բարի մարդիկ միջնորդում են և տեղ են գտնում զոցա համար: Մանիկին տեղաւորում են վերև վիշած ծօկոսով հարստի տանը, որտեղ նա ենթարկում է անարգանքի և ստիպում է հեռանալ իւր գժւաղդ ծնողների հետ, որոնք վճռում են զառնալ իրանց հարենիքը. բայց տեղ չը հասած, մնում են:

Պ. Ա. Հախումեանի երկը, իրբն նոր վիպասանի՝ գրւածք, ունի մի քանի առանձնութիւններ, որոնց մասին արժէ ասել երկու խօսք:

Հեղինակը չափազանց շտապում

է ամեն բան ասել, բոլոր զգացածը և իմացածը միանդամից թափել, և ապահանով մի փոքրիկ գրածքի մէջ ինքն իրան սպառում է. Զը մոռանալով իւր համակրութիւնները և հակակրութիւնները, նա չէ կարողանում հանդարաս պատմել, ալ միջամտում է իւր վէպի մէջ. Ալլավիսով «Մանկկը» գաղափար է տալիս ոչ միան հերոսների, ալ և նոյն իսկ հեղինակի համակրութիւնների մասին:

«Վկարագրութեան մէջ ևս հեղինակը իրան գործող անձն է երսակալում և, հերօսներին ներկացնելու ժամանակ, իւր ճաշակը և կարծիքները առաջ բերելով մի տեսակ միջամտում է ընթերցողի գործ մէջ.

Հեղինակը մտցնում է սրախոսութիւն, որ կազմում է գրքի լաւ

արժանաւորութիւններից մէկը. սական սրախօսութիւնը, իրըն աղ, պէտք է մի չափնի սահմանից դուրս չը դաւ և արհեստականութեան կամ անպատճառ սրախօսելու ցանկութեան կնկք չը կրի:

Աւելորդ եւմ համարում կանգ առնելնկարագրութիւնների մի քանի անկատարութիւնների և չափազանցութիւնների վերակ (զորօրինակ, բժշկի անձնաւորութեան, դղումանման երես ունեցողի նկարագրութիւնները):

Աչքի առաջ ունենալով, որ պ. Համումեանը թեթև կերպով կարողանում է նկարել կեանքի առանձին պատկերները, ցանկալի է, որ նա, զգալով իւր ազդ արժանաւորութիւնը, առ ալժմ բաւականանար միան ուրո՞ն պատկերներ դուրս բերելով:

Ա. Ք. Հ.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԱԴԵԱՆ. — «ՔԱՆԴԱՆ ՕՉԱԽ». անցեալից մի յիշողութիւն. հրատարակեց Յովհաննէս Ս. Գրիգորեան. Ախալցիա. Մկրտիչ Ղալամքարեանի տպարան. 1889 թ., փոքր քառածալ, 64 երես, տառ. № 10: Արտասպած «Նոր-Դար» ամենօրեւայ թերթից: Գինն է 20 կոպէկ:

Պ. Մարադեանը հարկաւոր է համարնել ծանօթացնել հայ հասարակութիւնը մի եղելութեան հետ, որ տեղի է ունեցել Թիֆլիսում: Եղելութիւնը, իւր տիսուր վախճանով, սարսափեցնում է մարդու և գործում է սաստիկ տպաւորութիւն: Ահա ինչպէս է պ. Մարադեանը պատմում դորա մանրամասնութիւնները,

Սոլոմոն Պետրովիչ վաճառականը,

մի սաստիկ հիւանդութիւնից լետով, վճռում է թողնել իւր զրկանքով լի, գծուծ կեանքը և պահկել: Նորակին՝ բարեսիրտ և գեղեցիկ Գեթեանը ճոխացնում է և բարեկարգում նորակեանքը և ընծալում է աշխարհին կատարինէ անունով մի աղջիկ, որ դառնում է ծնողների հոգսերի և խճամքի առարկան:

Սոլոմոն Պետրովիչը մտքում դնում